

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25859 17350
Հ. Ս. Խ. Հ.
ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ

ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆԲՆԵՐԸ

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Ուղեցույց ամսառային առևտրապետի	50 կ.
2 Ս. Շաղուհից — Մեր անելիքները (սպառված)	20 »
3. Հ. Փիրումյան յեվ Ս. Մելիքյան — Ինչպե՞ս ձեռնարկել գործարանում յուզ և շվեյց. պանիր պատրաստելը (սպառ.)	3 »
4. Հ. Փիրումյան — Խոտաբույսերը և նրանց մշակության յեղանակները (սպառ.)	10 »
5. Խ. Ավգալբեգյան — ՀՍՍՀ Հողային Որենսդիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատ. հողագտագործութուն (սպառ.)	40 »
6. Պ. Հեֆիմյան. — Թթենու մշակութունը	10 »
7. Պ. Հեֆիմյան. — Շերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը	10 »
8. Խ. Յերեցյան. — Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) (սպառված) 1ա.	50 »
9. Ն. Մելիք-Շահնազարյան. — Ծխախոտի մշակութունը (սպառված)	20 »
10. Ս. Ձրիգուլի. — Տասը պատգամ անասնապահին	20 »
11. Խ. Յերեցյան. — Անհատակմն, թե՛ կոռպ. կաթնատնտեսութուն	10 »
12. Հ. Հաբուքյան. — Բատրակ, կնքիր պարմանագիր (չափածո) (սպառ.)	5 »
13. Մ. Թումանյան. — Շարքացանը և նրա նշանակութ.	15 »
14. Խ. Յեր-Ներսիսյան. — Ինչպե՞ս մշակել խաղողի այգիները (28 նկարով) (սպառ.)	35 »
15. Յերեսմես զեպի գուզ. — Անգրկովկասյան Յերկրային Կոմիտեի բանաձևը գյուղացիական հարցի մասին. Ս. Շաղուհիցին խաբանով (սպառված)	15 »

Հ. Ս. Խ. Հ.
ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ




Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ

ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ


ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

A 25064 16037



ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



Դրանեպիսը № 1761 ք. Պատ. № 288 Տիրաժ 2000

Պետերատի յերկրորդ տպարան Յերևանում

ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խ. Ս. Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշում և.

1. Հաստատել հողոգտագործության ու հողաշինարարության ընդհանուր հիմունքները.

2. Այս ընդհանուր հիմունքների առանձին հողվածներից շեղումներ կատարել թույլատրվում է՝ դաշնակից կամ ավտոնոմ հանրապետությունների տնտեսական պայմանների առանձնահատկությունների հետևանքով ու համապատասխան դաշնակից հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեյի առաջադրությամբ՝ վոչ այլ կերպ, քան Խ. Ս. Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության հատուկ վորոշումներով:

3. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին 6 ամսվա ընթացքում վերանայելու իրենց որոնողությունը, ըստ վորոշում՝ պետք է վերացվեն կամ վերամշակվեն վերոհիշյալ ընդհանուր հիմունքներին հակասող կամ նրանց չը համապատասխանող բոլոր վորոշումները, նույնպես և պետք է հրատարակվեն այս ընդհանուր հիմունքներից բղխող նոր վորոշումներ:

4. Հանձնարարել Խ. Ս. Հ. Միության Ժողովրդական Կոմիտեների Խորհրդին այս ընդհանուր հիմունքներից բղխող փոփոխությունները մտցնել Խ. Ս. Հ. Միության որոնողության մեջ՝ 2 ամսվա ընթացքում:

Խ. Ս. Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝ Ս. ՉՐԳՅԱՆԻՆ

Խ. Ս. Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝ Ս. ՅԵՆՈՒԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ

15 Դեկտեմբերի, 1928 թ.

ՀԱՂՈՒՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈՂԱԾԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆԲՆԵՐԸ

ՀԻՄՆԵԿԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

1. ԽՍՀ Միության հողային կարգի հիմքը, վորն ապահովում է թե սոցիալիստական շինարարության հնարավորությունը գյուղատնտեսության մեջ և թե հողաշինարարության կիրառումն ու հողոգտագործության կազմակերպումը գյուղացիության հիմնական մասսայի՝ չքավորների ու միջակների շահերի համեմատ,—հողի ազգայնացումն է, այսինքն՝ հողի մասնավոր սեփականության ընդմիջող վերացումը և այն ԽՍՀ Միության բացառապես պետական սեփականություն հայտարարելը։ Հողի ազգայնացման սկզբունքը ուղղակի կամ գաղտնի կերպով խախտող բոլոր տեսակի գործարքները (հողի առ ու ծախս, գրավ գնել, նվիրել, կտակել, ինքնազուխ-ապորինի փոխանակել և այլն) անվավեր են։ Այդ գործարքների մասնակիցները չենթակա յեն ըրեական պատասխանատվության, մինչև հողից ոգտվելու իրավունքից դատական կարգով զրկվելու չափով։

2. ԽՍՀ Միությունն անմիջականորեն իրականացնում է.

ա) այս ընդհանուր հիմունքները կյանքում կիրառելու ընդհանուր հսկողությունը։

բ) ԽՍՀ Միության հիմնարկներին և համամիութենական նշանակություն ունեցող ձեռնարկություններին ու կազմակերպություններին համամիութենական հատուկ որենքների կարգով հատկացվող հողերի տնօրինությունը։

դ) համամիութենական գաղթի ֆոնդի համար հողեր գատելը և այդ ֆոնդի տնօրինութիւնը.

դ) հողը կոնցեսսիայով տալը.

ե) այս հոդվածում մատնանշված հողերի հատկացման խնդրում համապատասխան դաշնակից հանրապետութիւնների գործողութիւնների վրա հսկելը:

3. Դաշնակից հանրապետութիւնների իրավունքն է.

ա) հողերի ընդհանուր տնօրինումը, Զ-բդ հոդվածում մատնանշվածների բացարկութիւյամբ.

բ) հողոգտագործութեան ու հողաշինարարութեան կարգավորումը, այս ընդհանուր հիմունքների համեմատ.

գ) հողոգտագործողների տարբեր կատեգորիաներին տրամադրված հողերը նպատակին ծառայեցնելու հսկողութիւնը.

դ) իրենց կազմի մեջ մտնող հանրասփտութիւնների իրավունքների վորոշումը, այս հոդվածով նշված սահմաններում:

4. Հողաշինարարութիւնը կիրառելիս և հողոգտագործութիւնը կազմակերպելիս հիմնական խնդիր հանդիսանում է գյուղատնտեսութեան արտադրական ուժերի զարգացումը, ապահովելով նրա մեջ սոցիալիստական շինարարութեան ավելի ու ավելի ուժեղացումը:

Վերոհիշյալ հիմնական խնդիրն իրականացնելու և, նրա հետ կապակցված, գյուղացիութեան չքավոր ու միջակ լայն մասսաների բարեկեցութիւնը բարձրացնելու միջոցներն են՝ գյուղատնտեսութեան տեխնիկայի մակարդակի բարձրացումը, սոցիալատավոր գյուղացիութեան լայն շերտերի կոոպերացումը, կոլեկտիվ ու խորհրդային տնտեսութիւնների ցանցի ամրացումն ու զարգացումը, ինչպէս նաև գյուղի սակավագոր խավերի ու գյուղատնտե-

սական բանվորների շահերի պաշտպանութիւն և կուլ-
կութիւնը հաղթահարելու համար իրական միջոցներ ձեռք
առնելը:

5. Հողը ոգտագործութիւն համար տրամադրվում է՝
անհատական ու խառը հողոգտագործութիւն վարող հողալին
հասարակութիւններին և այլ միութիւններին, առանձին
ծխերին, կոլլեկտիվ տնտեսութիւններին, խորհրդային
տնտեսութիւններին և պետական (նրանց թվում քա-
ղաքային) այլ հիմնարկութիւններին ու ձեռնարկու-
թիւններին և հասարակական կազմակերպութիւննե-
րին (գյուղացիական փոխոգնութիւն ընկերութիւննե-
րին ու չքավոր գյուղացիների կոմիտեներին և այլն),
նաև դաշնակից հանրապետութիւնների գործող որենս-
դրութեամբ նախատեսված այլ կարգի հողոգտագործող-
ներին:

6. Դաշնակից հանրապետութիւնների և նրանց կազ-
մի մեջ մտնող հանրապետութիւնների համապատասխան
մարմինների վրա պարտականութիւն է դրվում վարելու
հողոգտագործութիւնների պետական ցուցակագրու-
թիւն (հողերի տոմարագրութիւն) միասնական սիստեմով,
վորը հիմունքները սահմանվում են համամիութենա-
կան հատուկ որենսդրով:

ՇԵՄԱՏԵՎՈՐՆԵՐԻ ՀՈՂՈՒՏԱԴՈՐԺՈՐԹՅՆ ԻՐԱՎՈՐՆԵՐ

7. ԽՍՀ Միութիւն բոլոր քաղաքացիները, առանց սե-
ռի, դավանանքի և ազգութիւն խորութիւն, վորոնք ցան-
կանում են հողը մշակել իրենց աշխատանքով, ինչպես նաև
ԽՍՀ Միութիւն սահմաններում ապրող և քաղաքական ի-
րավունքներ վայելող աշխատավոր ոտարերկրացիները, ի-
րավունք ունեն, դաշնակից հանրապետութիւնների որենս-
դրութեամբ սահմանված կարգով, աշխատավորական ոգ-
տագործութիւն համար հող ստանալու՝ հողոգտագործող-

ների գոյութիւնն ունեցող միութիւններէց մեկի մեջ մտնելով կամ նոր հողագտագործութիւններ կազմելով:

8. Աշխատավորական ոգտագործութեան համար հող ստանալու նախապատմութեան իրավունք ունեն գյուղատնտեսական կոլլեկտիւները, ինչպէս նաև չքավոր ու միջակ՝ հողագործի ու սակավահող ընտանեացիները:

Բնակչութեան հիշյալ խմբերը նույն պիտի նախապատմութեան իրավունք վայելում են նաև նրանց տրամադրովոյ հողերի վորակի ու տեղադրութեան նկատմամբ (լավագոյն ու հարմար դասավորված հողեր ստանալու իրավունք):

ԾԱՆՈԹ.— Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի զինվորական ծառայողների ու նրանց ընտանիքների հողագտագործութեան ու հողաշինարարութեան մասին արտոնութիւններ սահմանվում են ԽՍՀ Միութեան և դաշնային հանրապետութիւնների հատուկ որոշումներով:

9. Խորհուրդների ընտրական իրավունքից զրկված անձանց աշխատավորական ոգտագործութեան համար հող հատկացվում է միայն վերջին հերթին:

Արգելվում է իրենց տնտեսութիւններէց վտարված նախկին կալվածատերերին և այլ հողատերերին՝ աշխատավորական տնտեսութիւն վարելու ցանկութեան գեպքում՝ հող հատկացնել աճն նահանգներում ու շրջաններում (կամ համապատասխան վարչատնտեսական միավորներում), վորտեղ նրանք առաջ հող են տիրել:

10. Աշխատավորական ոգտագործութեան համար հող հատկացվում է առանց նախապէս վորոշ ժամկետ սահմանելու:

Հողի աշխատավորական ոգտագործութիւնը դադարում է.

- ա) յերբ հողային հասարակութեան, ծխի կամ գյուղատնտեսական կոլլեկտիվի բոլոր անդամները կամովին հրաժարվում են հողից.

բ) չե՞րբ հողային հասարակությունը, ծուխը կամ կոլ-լեկտիվը առանց հարգելի պատճառների հողը չեն ոգտագործում՝ դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանված ժամկետի ընթացքում:

գ) չե՞րբ ծուխը հանգչում է.

դ) չե՞րբ ծուխը դադարում է սի ալլ տեդ, դադարեցնում է ինքնուրույն տնտեսությունը նախ-պին տեղում՝ դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանելիք ժամկետը լրանալուց հետո:

ե) չե՞րբ հողի ազգայնացման սկզբունքը խախտող գործարք է կատարվում (հոգվ. 1)

զ) չե՞րբ հողն ապուրինի կերպով վարձակալության է տրվում:

է) չե՞րբ հողը սահմանված կարգով դրավվում է պետական կամ հասարակական կառիքների համար (հաղորդակցության ճանապարհներ, արժեքավոր հանածոների ժշակություն և այլն):

ը) դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանվող այլ դեպքերում:

11. Արգելվում է աշխատավորական ոգտագործության համար հող ստացած միություններում (հողային հասարակություններ, կոլլեկտիվներ և այլն), ինչպես նաև ծխերում իրավունքների վորև է անհավասարություն սահմանել՝ սեռի, ազգության, դավանանքի և քաղաքացիության խըտրության պատճառով: Մասնավորապես արգելվում է հողարածին ստանալու տարբեր նորմաներ սահմանել միևնույն միության անդամների համար, ինչպես և հողային հասարակության կամ կոլլեկտիվի ընդհանուր ժողովներում մասնակցելու իրավունքը սահմանափակել՝ ընտրական իրավունքից չը զրկված անձերի համար:

12. Հողոգտագործողները պարտավոր են կանոնավոր և նպատակահարմար կերպով ոգտագործելու իրենց հատկացված հողը:

Հողից կանոնավոր ու նպատակահարմար ձևով ոգտը վելու հակողության կարգը և այդ կարգի խախտման դեմ կիրառվող միջոցները վորոշվում են դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ:

13. Դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ պետք են խաատեսվեն միջոցներ, վորոնք ապահովում են ախատավորական հողոգտագործության անհրաժեշտ կայունությունը և նպատավոր ալումաններ ստեղծու՝ բարելավման նպատակով ախատանքի ավելի ուժեղ ներդրում կատարելու գյուղատնտեսական արտադրության մեջ:

Այդ միջոցներից են՝

- ա) տնտեսական ձեռնարկումների միջոցով կանխել ախատավորական տնտեսությունների չափազանց մանրացումը, մասնավորապես ծխի անրաժանելի գուլքից հասանելի մասի վորտարեն բաժանվող անդամներին հատուցում տալու նպատակով գյուղացիական տնտեսություններին վարկավորելու միջոցով, ինչպես նաև անմասնատելության նորմաներ սահմանելով:
- բ) հողաշինարարության և հողի վերաբաժանության ժամանակ բարելավումներ կատարած ոգտագործողների տրամադրության տակ՝ նախապատուության կարգով թողնել այն հողամասերը, վորտեղ արմատական բարելավումներ են կատարվել:
- գ) պետական ու հասարակական կարիքների համար հողը գրավելու դեպքում, ինչպես նաև հողաշինարարության, հողի վերաբաժանության, գաղթի, տարաբնակչության (расселение) ժամանակ

հատուցել հողոգտագործողների ֆնանսերն ու
չոգտագործած ծախսերը.

դ) վարկավորել այն սակավագոր տնտեսություններին, վորոնք պիտի հատուցեն իրեց ոգտագործությանն անցած բարելավված հողամասերի վրա կատարված ու չոգտագործված ծախսերը.

յե) սահմանափակել հողի հաճախակի վերաբաժանությունները, վոր կապված չեն տնտեսական բարելավումներ կիրառելու կամ կուլակուլթյան դեմ պայքարելու հետ:

14. Հողի վերաբաժանությունը հողոգտագործողների միջև սահմանվում է դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ և թույլատրվում է հետևյալ հիմունքներով.

Համայնական հողոգտագործություն ունեցող հասարակությունները հողաբաժանություն կարող են կատարել դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանվող ժամկետներում ու կարգով:

Հողի վերաբաժանությունը հողոգտագործության այլ կարգ ունեցող հասարակություններին անդամների, նաև հողային հասարակության կազմի մեջ չմտնող տնտեսությունների համար, ինչպես և ժամկետից շուտ հողաբաժանությունը՝ համայնական հողոգտագործություն ունեցող հասարակությունների մեջ՝ թույլատրվում է միայն հետեվյալ դեպքերում.

1. Հողային արարության.

2. Տնտեսության բարելավված ձևերի անցնելու.

3. Կուլակուլթյան դեմ պայքարելու անհրաժեշտության:

4. Հողը պետական ու հասարակական կարիքների համար գրավելու:

Դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ

կարող ե թույլատրվել հողի մասնակի բաժանութիւն (սահմանված նորմաներից ավելի հողի չգրավում, կրճատում ավելացում և այլն)։

ՀՈՂԱՅԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15. Հողաշինարարութիւնը կազմակերպելով հողաշին տարածութիւնը, բնակչութեան հողոգտագործութեան ձեւերի ազատ ընտրութեան իրավունքի պահպանութեամբ, պետք ե նպաստի գլուղատնտեսութեան ընդհանուր վերելքին և նրա կոոպերացմանն ու կոլեկտիվացմանը։

Հողաշինարարութիւնը մասնավորապէս պետք ե նպաստի հողացրվածութեան, հողհեռավորութեան և հողոգտագործութեան ալլ թերութիւնների վերացմանը, բարելավված ցանքափոխութեան անցնելուն, հողատեսքերի արմատական բարելավմանը, տարաբնակութեան ու գաղթի միջոցով հողի տնտեսական յուրացմանը (освоение) և տնտեսութեան ալլ բարելավումներին։

16. Հողաշինարարութիւնը կատարվում ե ինչպէս հողոգտագործողների, նուէնպէս և գլուղխորհուրդների, վիճակալին (волостное), գաւառակային և նրանց համապատասխանող խորհուրդների համագումարների ու գործադիր կոմիտեների և հողային մարմինների նախաձեռնութեամբ։

Պարտադիր հողաշինարարութիւնը թույլ ե տրվում դաշնակից հանրապետութիւնների որենսդրութեամբ վորոշվող կարգով կուլակների զավթողական ձգտումների դեմ պայքարելու, առանձնապէս սուր ու խճճված հողալին-տնտեսական հարաբերութիւններին վերջ տալու, գաղթի ֆոնդ ստեղծելու և ալլ նպատակներով։

17. Հողաշինարարութեան ժամանակ հող հատկացնելու կարգն ու նորմաները սահմանվում են դաշնակից հարապետութիւնների որենսդրութեամբ։

18. Պետական հիմնարկների ու ձեռնարկութուններին կարիքների, ինչպես նաև կոլլեկտիվ տնտեսութուններին հողալին տարածութունները կազմակերպելու համար հողաշինարարութունը կատարվում է հերթից դուրս: Մնացած հողոգտագործողների պահանջի դեպքում հողաշինարարութունն առաջին հերթին կատարվում է նրանց համար, վերոնք անցնում են գյուղատնտեսության կոոպերացմանը, կոլլեկտիվացմանն ու նրա տեխնիքական մակարդակի բարձրացմանն առավել նպաստող հողոգտագործության ձևերի:

Ագարակային ու հատվածային տնտեսութուն կազմելու համար տրված հայտերի հետևանքով հողաշինարարութուն կատարվում է վերջին հերթին և նույնիսկ այդ հայտերն անկատար պիտի թողնվեն այն դեպքերում, յերբ ագարակային տնտեսութուններ հիմնելու հետևանքը կարող է լինել կուլակության աճումն ու ամրացումը:

19. Հողաշինարարության ժամանակ կոլլեկտիվ ու գյուղացիական սակավագորտնտեսութուններին՝ աշխատավոր այլ հողոգտագործողների նկատմամբ նախապատվութուն տալով՝ հատկացվում են այն հողերը, վերոնք ավելի հարմար ձևով են դասավորված, մատչելի չեն գյուղին մշակության և ապահովված են կանոնավոր տնտեսութուն վարելու համար անհրաժեշտ հողատեսքերով, ջրով ու ճանապարհներով:

20. Զբաղոր ու սակավագորտ-միջակ բոլոր տնտեսութուններին և բոլոր կոլլեկտիվ տնտեսութուններին հողաշինարարութունը կատարվում է պետության հաշվին:

Մյուս հողոգտագործողների հողաշինարարության համար դաշնակից հանրապետութուններին որենսդրությամբ կարող է վճար սահմանվել:

ԾԱՆՈԹ.— Դաշնակից հանրապետութուններին որենսդրությամբ կարող են նախատեսվել բնակչության պարհակներ, վոր անհրաժեշտ են հողաշինարարական աշխատանքները կատարելու համար:

21. Աշխատավորական հողոգտագործողների և նրանց միությունների տնտեսությունները, վորոնք հողաշինարարության կարգով տեղափոխված են այնպիսի նոր վայրեր, վորտեղ տնտեսություն կազմակերպելու համար հողոգտագործողներից պահանջվում է հողատեսքերի արմատական բարելավումներ կատարել (կոճղահանություն, վոռոգման ու ցամաքեցման աշխատանքներ և կուլտուրական հողեր պատրաստելու բարելավման աշխատանքներ), կամ մշակել խամ հողեր, կամ մշտական տնտեսություն վարելու համար անհրաժեշտ շենքեր կառուցել հողաշինարարությամբ հատկացված հողամասերի վրա՝ համապատասխան կանոնադրությամբ նախատեսված ժամկետների ընթացքում, ազատվում են միասնական գյուղատնտեսական հարկից, ինչպես նաև վայելում են դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանված այլ արտոնություններ:

22 Հողաշինարարությունը հողագործության ժողովրդական կոմիսարիատների ընդհանուր ղեկավարությամբ ու հսկողությամբ կատարում են տեղական հողային մարմինները, նրանց կողմից այդ մասին լիազորված հողաշինարարների միջոցով:

Հողաշինարարական գործողությունները կատարելու վրա մերձավոր հսկողություն ունենալու և այդ գործողություններին մասնակցելու պարտականությունը դրվում է գյուղիորհուրդների և շրջանային ու վիճակային գործադիր կոմիտեների կամ նրանց համապատասխանող մարմինների վրա:

Գ Լ Ղ Թ

23. Գողթը կատարվում է անբնակ ու սակավաբնակ շրջանները պլանային կարգով լուրացնելու և նրանց բնական հարստությունները գյուղատնտեսական ու արդյու-

նաբերական արտադրանքն ավելացնելու նպատակով ոգտագործելու համար, ինչպես նաև ԽՍՀՄ առանձին վայրերի գերբնակչութունը նվազացնելու և այդ վայրերում մնացողների տնտեսությունը բարելավելու նպատակով:

24. Գաղթի ձեռնարկումները կիրառելուն մասնակցող բոլոր մարմինները պարտավոր են պլանային ձևով շաղկապելու համապետական ու տեղական տնտեսություն շահերը և հողաբաժինների նորմաները սահմանելիս ու հողաշինարարությունը կատարելիս հաշվի առնելու ընակեցվող շրջանների տեղական բնակչության հողային կարիքները: Միաժամանակ պետք է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի՝ գաղթողներն ուղարկվեն բնակեցվող այնպիսի շրջաններ, վորոնք ավելի լեն համապատասխանում նրանց ընտելացած բնական սլայմաններին, գաղթողներն ապահովվեն սոցիալ-կուլտուրական ոգնությունը և վորպեսզի միևնույն աղգություն պատկանողներն առավելապես բնակեցվեն միևնույն շրջանում ու միատեղ:

25. Դաշնակից և ինքնավար հանրապետությունների կառավարությունները պարտավոր են հայտնաբերելու իրենց սահմաններում գտնվող անբնակ շրջանները և կազմելու նրանց ներհանրապետական ու համամիութենական ոգտագործություն պլաններ, վորոնք պիտի հաստատվեն սահմանված կարգով:

26. Գաղթի ձեռնարկումներին մասնակցող բոլոր հիմնարկներն ու ձեռնարկությունները պարտավոր են միջոցներ ձեռք առնելու, վորպեսզի լեյման վայրերում գաղթականական ընկերություններ, իսկ բնակեցման վայրերում կոլլեկտիվներ կազմվեն, ոգնելով նրանց առաջին հերթին վարկեր ու արտոնություններ տալով, այլև թողած գույքը լուծարքի լենթարկելուն աշակցելով:

27. Գաղթողների տնտեսություններն արագ կերպով ամրացնելու և զարգացնելու նպատակով, սակավագոր խմ-

բերին նախապատվութիւն տալու կարգով, նրանց վերապահվում են առանձին որենքներով նախատեսված արտոնութիւններ (փոխադրութեան եւ ժամ տարիքի, մինչև անգամ իսպառ ազատութեան ալիք ծախսից կողքի տնտեսութիւն կազմակերպող չքավորութեան և զորացրված կարմիր-բանակայինների ու հրամանատարական կազմի համար, նաև վորոշ ժամանակամիջոցով միասնական գլուղատնտեսական հարկից ազատութեան, արտոնյալ վարկավորութեան ու մատակարարութեան և այլն)։ Այդ խմբերին գաղթելու դեպքում, ավելի ունևոր խմբերի հանդեպ նախապատվութեան կարգով, պետք է հատկացվեն գաղթի ֆոնդի այն հոգեբը, վորոնք ավելի նախապատրաստված են յուրացման համար և վորակով բարձր են ու տեղադրութեամբ հարմար։

28. Գաղթի կազմակերպումը և գաղթողների յերման, փոխադրութեան ու տնտեսական շինարարութեան կարգը վորոշվում է ԽՍՀՄ և դաշնակից հանրապետութիւնների որենսդրութեամբ՝ ըստ պատկանելւոյն։

Մասնավորապես դաշնակից հանրապետութիւնների որենսդրութեամբ սահմանվում են գաղթողներին հոգ տալու կարգն ու նորմաները։

ՀԱՂԱՅՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿՈՒԼԵԿՏԻՎ ՅԵՎ ԸՆԿԵՐԱԿՆՆ ՈՅԼ ՉԵՎԵՐԸ ԽՐԵՍՈՒՍԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ


29. Նկատի ունենալով, վոր գլուղացիութեան կողմերացումը գլուղատնտեսութեան սոցիալիստական վերակազմութեան հիմնական ուղին է հանդիսանում և վոր սակավագոր գլուղացիութեան նկատելի խավերի համար իր տնտեսութիւնը բարձրացնելու ալլ միջոց չկա, քան հող-ոգտագործութեան ընկերական ձևերին անցնելը, պետութիւնն առանձնապես աջակցում ու խրախուսում է կողքի տնտեսութիւնների (կոմունաների, արտելների, ըն-

կերուծյուններին) կազմակերպությանն ու գործունեությանն:

Այս դեպքում պահպանվում է տնտեսության կոլլեկտիվ և ընկերական այլ ձևերին կամովին անցնելու սկզբունքը:

30. Կոլլեկտիվ տնտեսություններին աջակցելու և խրախուսելու նպատակով նրանց համար սահմանվում են հետևյալ արտոնություններն ու առավելությունները.

- ա) դյուղատնտեսական միասնական հարկի արտոնություններ՝ համապատասխան կանոնադրության համաձայն.
- բ) անհատական տնտեսությունների հանդեպ նախապատվության կարգով արտոնյալ վարկավորում, այդ նպատակով ուժեղացնելով կոլլեկտիվ տնտեսությունների յերկարատև վարկավորման ֆոնդը.
- գ) հողի հատկացում՝ նախապատվության կարգով անհատական տնտեսությունների հանդեպ (8 ըդ հոդված).
- դ) մինչև այս ընդհանուր հիմունքների հրատարակումը պետական հողային գույքերից կոլլեկտիվ տնտեսություններին վարձով տրված հողերի հատկացում՝ նրանց աշխատավորական ոգտագործության համար:
- յե) մինչև այս ընդհանուր հիմունքների հրատարակումը պետական մարմիններից կոլլեկտիվ տնտեսությունների ստացած արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկությունների, շենքերի, ինվենտարի և այլ հարմարությունների հանձնում՝ նրանց անվճար ոգտագործության և տնօրինության համար:
- զ) կոլլեկտիվ տնտեսությունների ապահովում՝ գյուղատնտեսական մեքենաներով և գործիքներով



հանքային պարարտանյութերով, սերմերով և այլ միջոցներով՝ անհատական տնտեսությունների հանդեպ նախապատվության կարգով և արտոնյալ պայմաններով:

ե) հողաշինարարության կատարումը հերթից դուրս և պետության հաշվին:

Դաշնակից հանրապետությունների որոշողություններ պետք է նախատեսվեն տնտեսության կոլլեկտիվ ձևերին անցնող հողոգտագործողներին տնտեսական ձեռնարկումների բոլոր գծերով վերապահվող արտոնություններ ու շահավետ պայմաններ:

ԾԱՆՈԹ.— Կոլլեկտիվ տնտեսությունները լուծարքի յենթարկվելու դեպքում «դ» կետում հիշված հողը վերադարձվում է պետական հողային ֆոնդին, իսկ «յե» կետով նախատեսված գույքը կամ նրա արժեքը հանձնվում է պետական համապատասխան մարմիններին:

31. Հանրային մշակության տակ գտնվող հողի քանակությունը հողաբաժանության և հողաշինարարության ժամանակ մնում է համապատասխան հողոգտագործողների տրամադրության տակ, յեթե նույն իսկ ավելի յե հողի այն քանակից, վոր նրանց բաժին է ընկնում ըստ բաշխման միավորների:

32. Դաշնակից հանրապետությունների որոշողություններ պետք է միջոցներ նախատեսվեն արգելելու կոլլեկտիվի ցանքափոխության խախտումը՝ առանձին անդամների նրա կազմից դուրս գալու դեպքում:

33. Հողային հասարակությունների որինական ընդհանուր ժողովը, ձայների մեծամասնության վորոշմամբ, կարող է փոքրամասնության համար պարտադիր վորոշումներ ընդունել՝ ագրիկուլտուր բարելավումների, բազմազաշտ ցանքափոխության, հողի բարելաված մշակության, մոլախոտերի դեմ պայքարելու և այլ ձեռնարկումների մա-

սին, վորոնք թվարկված ու սահմանված կը լինեն դաշնակից հանրապետութիւնների որենսդրութեամբ:

34. Հողային հասարակութեան փոքրամասնութեանը իրավունք եւ վերապահվում հողերով հանդերձ զատվելու հողային հասարակութիւնից՝ կոլեկտիվ տնտեսութիւն կազմակերպելու համար: Զատվելու կարգը եւ մասնավորապէս զատման համար անհրաժեշտ տնտեսութիւնների նվազագույն թիվն ու հողի նվազագույն տարածութիւնը սահմանվում եւ դաշնակից հանրապետութիւնների որենսդրութեամբ՝ համաձայն տեղական պայմանների ու տնտեսութեան ձեւերի:

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

35. Խորհրդային տնտեսութիւնները, վորպէս պետական գլուղատնտեսական խոշոր ձեռնարկութիւններ, սոցիալիստական զարգացման հիմքերից մեկն են հանդիսանում գլուղատնտեսութեան մեջ: Տնտեսութիւնը լավ վարելու իրենց որինակով, ղեկավարութեամբ եւ իրենց տեխնիքական ու կուլտուրական միջոցներով Խորհրդային տնտեսութիւնները պետք եւ ոգնեն շրջակա գլուղացիութեանը, դրանով իսկ նպաստելով գլուղատնտեսութեան աճմանը, նրա կոոպերացմանն ու կոլեկտիվացմանը:

36. Խորհրդային տնտեսութիւնների վրա դրված խնդիրների իրականացումն ապահովելու համար հողային եւ այլ մարմինները, վորոնցից այդ կախված եւ, պետք եւ ձեռք առնեն Խորհրդային տնտեսութիւններին աջակցելու հատուկ միջոցներ, վորոնց թվին են պատկանում.

- ա) Խորհրդային տնտեսութիւնների հողային ու տնտեսական շինարարութեան կատարում՝ հերթից դուրս եւ բյուջետային ու այլ միջոցների հաշվին.

- բ) ձևաբար տրամադրել խորհրդային տնտեսություններին նրանց հետ տնտեսապես կապված տեխնիքական ձեռնարկությունները: Ապահովել ու ընդարձակել խորհրդային տնտեսությունների ձեռնարկությունները և հետզհետե՝ նրանց արտադրական գործունեությունն ամրանալու համեմատ՝ նորերը կազմակերպել:
- գ) խորհրդային տնտեսություններին ազատել իրենց ոգտագործության տակ գտնվող հողերի վարձագնից:
- դ) տրեստացված խորհրդային տնտեսություններից ստացվող գյուղատնտեսական հարկի գումարները՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից սահմանվող կարգով հատկացնել խորհրդային տնտեսությունների վարկավորման հատուկ ֆոնդեր հիմնելու նպատակին:
- է) պլանային կարգով ընդարձակել խորհրդային տնտեսությունների ցանցը, սպասարկել նրանց ագրոնոմիական ձեռնարկումների միջոցով: Ուժեղացնել նրանց հիմնական ու շրջանառու միջոցները և բարելավել վարկավորման պայմանները, մասնավորապես խորհրդային տնտեսությունների համար կատարելագործված մեքենաներ, գործիքներ ու պարարտանյութեր, ձեռք բերելու նպատակով: Հերթից դուրս պետական պահեստից հող տրամադրել թե՛ նոր տնտեսություններ հիմնելու և թե՛ չեղածներն ամրացնելու համար:
- զ) հողային ժամրկումների կողմից առանձին պայմանագրերի հիման վրա հատուցել այն ծախսերը, վճար կատարում են խորհրդային տնտեսությունները, գյուղացիական տնտեսությունների ագրիկուլտուր սպասարկության ասպարիզում:

ե) խորհրդային տնտեսությունների ու նրանց ոժանդակ ձեռնարկությունների նկատմամբ, բացի դուղատնտեսական տրեստների առևտրական ձեռնարկություններից, կիրառել սոցիալական ապահովագրության արտոնյալ կոպարներ, վոր սահմանված են պետական բյուջեյով պահվող հիմնարկների համար:

ը) արտոնյալ վարկ տալ խորհրդային տնտեսություններին, գյուղատնտեսական բանվորների համար բնակարաններ կառուցելու համար: անշեղ ու խստորեն կիրառել կյանքում գյուղատնտեսական բանվորների աշխատանքի պաշտպանության վերաբերյալ ձեռնարկումները և բարձրացնել նրանց նյութական ու կուլտուրական մակարդակը:

թ) կիրառել խորհրդային տնտեսությունների ցանցի ամրացումը, զարգացումն ու ընդլայնումն ապահովող այլ միջոցներ, վորոնք նախատեսվելու չեն դաշնակից հանրապետությունների որոշագրությամբ:

ՄԵԼՈՍԵԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՏԵՎՈՐԹՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

37. Տարերային աղետներից (անբերրիություն, հրդեհ, անասունների մահ և այլն) կամ ինվենտարի և կամ բանվորական ուժի պակասությունից (մասնավորապես՝ մահվան, զորանավաթի, խորհրդային ու հասարակական ծառայության անցնելու, աշխատավորական վաճառակի գնալու հետևանքով տնտեսությունից ժամանակավորապես կտրվելու, գաղթի և այլ պատճառներով) թուլացած աշխատավորական տնտեսություններին թույլ և արվում ամբողջ հողը կամ նրա մի մասը վարձով տալու — դրամով

կամ բնավարձով—դաշնակից հանրապետութիւնների որեւէ սղորութեամբ սահմանվելիք կարգով:

ԾԱՆՈԹ.—Հողը կուլակային տնտեսութիւնների կողմից վարձով տրվելու դեպքում, այդ հողը հողային-դատական մարմինների վորոշումներով պետք է հանվի այդ տնտեսութիւնների ոգտագործութիւնից: Այդ հողերի հետագա ոգտագործութեան կարգը վորոշվում է դաշնակից հանրապետութիւնների որեւէ սղորութեամբ:

38. Աշխատավորական ոգտագործութեան հողը վարձով տալ կարելի չէ վեց տարուց վոչ ավելի ժամանակով: Վիճակային ու գաղառակային գործադիր կոմիտեները կարող են վարձակալութեան այդ ժամանակամիջոցն իջեցնել մինչև 3 տարի այն տնտեսութիւնների համար, վորոնք չնայած պետութեան, գլուղացիական փոխոգնութեան կոմիտեների և կոոպերացիայի կողմից ցույց տրվող ոգնութեան՝ տրամադրված հողն իրենք չեն մշակում, այլ տարեց-տարի վարձով են տալիս: Յեթե վարձակալութեան համար սահմանված առավելագույն ժամկետը լրանալուց հետո տնտեսութիւնը չի սկսի հողն ինքնուրույն կերպով ոգտագործել, այդ դեպքում նա զրկվում է հողի այն մասն ոգտագործելու իրավունքից, վորը վարձով է տալիս: Այս դեպքում հողն անցնում է՝ հողային հասարակութեան տրամադրութեան տակ, յեթե վարձատուն պատկանում է նրա կազմին, իսկ այլ պարագային՝ պետական. պահեստի ֆոնդին:

ԾԱՆՈԹ.— 1. Վերոհիշյալ կարգով հողից զրկելը կատարվում է հողային-դատական մարմինների վորոշումով:

2. Իրենց կազմում աշխատավոր անգամ չունեցող ծխերի (անչափահասներ, հաշմանդամներ, արևորներ և այլն) տնտեսութիւնները կարող են հողի վարձակալութեան պայմանագրերը վերանորոգել՝ դաշնակից հանրապետութիւնների որեւէ սղորութեամբ սահմանվելիք ժամկետներին տնտեսութեամբ ու կարգով:

39. Գաղթողներին իրավունք է տրվում չեման վայրում ունեցած իրենց հողերը վարձով տալ՝ գաղթելու պահից մինչև 6 տարի ժամանակով՝ դաշնակից հանրապետությունների որենսդրությունը սահմանված կարգով:

40. Աշխատավորական հողը վարձով տալն որինական է համարվում՝ վարձակալության պայմանագիրը գյուղխորհրդում տոմարագրված լինելու դեպքում միայն:

Գյուղխորհուրդը մերժում է պայմանագիրը տոմարագրել, չեթե հողը վարձով է տրվում որենսդրության խախտումով, ժամանավորապես՝

ա) չեթե վարձակալության պայմանները ստրկացուցիչ են սակավագոր գյուղացիության համար.

բ) չեթե հողը վարձով է տրվում կուլակային տնտեսություններին.

գ) չեթե ծխի հողը վարձով տալու համար չկա ծխի բոլոր իրավագոր անդամների համաձայնությունը:

41. Անպայման արգելվում է աշխատավորական ոգտագործության հողը վարձակալի կողմից ուրիշին հանձնելը (չենթավարձակալություն): Այդպիսի գործարքներին ժամանակցողները չենթարկվում են քրեական պատասխանատվության, զրկվելով հողից ոգտվելու իրավունքից:

42. Աշխատավորական ոգտագործության հողերի վարձակալները պարտավոր են այդ հողերում վարել այնպիսի տնտեսություն, վորն ուժասպառ է անի հողը և տեղական հողոգտագործողների տնտեսությունների միջին մակարդակից ցած չլինի:

43. Հողային հասարակությունների կողմից հողը վարձով տալու պայմաններն ու կարգը սահմանվում է դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ:

44. Գյուղական խորհուրդներին, վիճակալին ու գավառակային գործադիր կոմիտեներին և հողային մարմիններին վրա պարտականութիւնն է դրվում մերձավոր հսկողութիւնն ունենալ հողի վարձակալութեան վերաբերյալ գործող որենքների ու կանոնների ճիշտ կատարման վրա և պատասխանատվութեան չենթարկել այդ որենքներն ու կանոնները խախտողներին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԵՐԱՎՈՂ ՎԵՐՉՈՒ ԱՅԽԵՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

45. Վարձու աշխատանքը գյուղացիական տնտեսութեան մեջ, վորպես կանոն, թույլ է տրվում այն պայմանով, չեթե այն կիրառող տնտեսութիւնն անպայման պահպանում է իր աշխատավորական կառուցվածքը, այսինքն՝ չեթե տնտեսութեան աշխատունակ բոլոր անդամները մասնակցում են տնտեսութեան աշխատանքներին, իսկ վարձու աշխատանքը միայն ոժանդակ նշանակութիւնն ունի:

Այս դեպքում ոժանդակ վարձու աշխատանքի կիրառումը գյուղացիական տնտեսութեան մեջ պետք է կապվի հատուկ որենքների պահպանութեան հետ (1925 թ. ապրիլի 18-ի ժամանակավոր կանոնները — գյուղացիական տնտեսութիւնների մեջ ոժանդակ վարձու աշխատանք կիրառելու մասին — Խ.Ս.Հ.Մ. Որենքների ժողովածու, 1925 թ. № 26, հոդվ. 183):

Մնացած բոլոր դեպքերում, վերոնց թվում նաև բոլոր կուլակային տնտեսութիւնների նկատմամբ, վարձու աշխատանքի կիրառումը կարգավորվում է Աշխատանքի Որենսգրքով և գյուղատնտեսութեան մեջ կիրառվող աշխատանքի պաշտպանութեան ու չափավորման վերաբերյալ կարգադրութիւններով:

46. Գլուղատնտեսության մեջ վարձու աշխատանքի վերաբերյալ որենքներ ի կերպուման մերձավոր հրակողութունը դրվում է աշխատանքի տեսչության վրա, իսկ գլուղացիական տնտեսությունների նկատմամբ՝ նաև գլուղական խորհուրդների ու նրանց համապատասխանող մարմինների վրա:

ՀՈՂԱՅԻՆ ՀՄԵՐԱԿԱՌԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՅՈՒԼՎՈՐԻ ԽՈՐՀՈՐԴ

(Կամ նրանց համապատասխանող միություններ ու մարմիններ)

47. Հողային հասարակութունը գործող որենքների ու կարգադրությունների և իր կանոնադրության հիման վրա սահմանում է հասարակության մեջ մտնող ծխերի համար հողային-տնտեսական կարգ ու կանոններ և հրակում է իր անդամների վրա: Հողն ոգտագործելու խընդրում նա կարող է արտադրական կոտպերացման և կուլիեկտիվացման վերաբերյալ ձեռնարկումներ իրականացնել: Պետության առաջ նա պատասխանատվություն է կրում իրեն տրամադրված հողատեսքերի կանոնավոր ու նպատակահարմար ոգտագործության համար:

Հողային հասարակության իրավունքներն ու պարտականությունները, նաև նրա մեջ մտնելու և նրա կազմից դուրս գալու կարգը ճշտորեն սահմանվում է դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ, այս ընդհանուր հիմունքները յեղ ռենհալով:

48. Հողային հասարակության անդամ են համարվում.

- ա) հասարակության ծխերի կազմի մեջ մշտնող բոլոր անձինք՝ առանց սեռի, հասակի, դավանանքի և ազգության խտրության.
- բ) ծխերի կազմի մեջ չմտնող անձինք, չեթե

նրանք իրենց աշխատանքով մասնակցում են հողային հասարակության կամ առանձին ծխերի գյուղատնտեսական աշխատանքներին կամ սպասարկում են նրանց և չեթե այդ անձինք խորհուրդների ընտրության իրավունք են վայելում (բատրակներ, հովիվներ, դարբիններ և այլն):

ԾԱՆՈԹ.—Այս հոդվածի «բ» կետում հիշված անձանց տնտեսող ու դաշտային հող հատկացվում է դաշնակից հանրապետությունների որոշմամբ սահմանվելիք կարգով:

49. Հողային հասարակության ընդհանուր ժողովներում վճռողական ձայնի, ինչպես նաև հասարակական ընտրովի մարմիններում ընտրվելու իրավունք են վայելում հասարակության աջ անդամները, վորոնք ունեն խորհուրդների ընտրության իրավունք:

ԾԱՆՈԹ.—Հողային հասարակության անչափահաս անդամները, վորոնք ինքնուրույն տնտեսատերեր են, հասարակության իրավազոր անդամներ են համարվում, չեթե նրանց տնտեսությունները կուլակային չեն:

50. Հողային հասարակության գործերը վարում են՝ նրա անդամների ընդհանուր ժողովը, ինչպես նաև ընտրովի մարմինները (հողային գործերի լիազորներ, վարչություն և այլն):

ԾԱՆՈԹ.—Գյուղխորհրդի և հողային հասարակության գործունեության շրջանակը նույնը լինելու դեպքում, հողային հասարակության գործերի վարումը դրվում է գյուղական խորհրդի վրա:

Այլ դեպքերում հողային հասարակությունը ընտրում է հատուկ լիազոր կամ վարչություն, և կամ այդ ֆունկցիաները յուր վորոշմամբ դնում է գյուղխորհրդի անդամների վրա:

51. Հողոգտագործութունը և հողաշինարարությունը կարգավորելու ասպարիզում գյուղական խորհուրդների վրա պարտականութուն է դրվում.

ա) դեկավարել հողային հասարակութունների աշխատանքը.

բ) հաստատել հողային հասարակության վորոշումները, վորոնք վերաբերում են հողոգտագործության ու հողաշինարարության հարցերին (հողոգտագործության ձևեր ընտրելու, հողաշինարարական նախագծեր ընդունելու մասին),

գ) վորոշել այն հողոգտագործողների ցուցակը, վորոնք որեւի համաձայն հողաշինարարական արտոնություններ են վաճելում և հողաշինարարական աշխատանքների ծախսերը հատուցելու համար վարկ ստանալու իրավունք ունեն:

Յեթե հողային հասարակության անդամների ընդհանուր ժողովի վորոշումը խախտում է որեւիներն ու վերադաս մարմինների կարգադրությունները և հակասում է կոոպերացման խնդիրներին, կամ խախտում է չքավորության շահերը, գյուղական խորհուրդն իրահունք ունի կասեցնելու հողային հասարակության անդամների ընդհանուր ժողովի վորոշումը և հարց մտցնելու առաջիկա ժողով՝ այդ վորոշումը վերանայելու մասին: Յեթե այդ հարցի վերաբերմամբ գլուղխորհուրդը համաձայն չէ հողային հասարակության նոր վորոշմանը, ապա նա իրավունք ունի փոխելու այդ վորոշումը: Հողային հասարակությանն այդ դեպքում իրավունք է տրվում չերկուշաբաթվա ընթացքում վորոշումը փոխելու դեմ գանդատ տալու ըստ պատկանելուն՝ վիճակային, գավառակային կամ նրանց համապատասխանող գործադիր կոմիտեին:

52. Գյուղական խորհուրդների իրավունքներն ու պարտականությունները, նրանց անմիջական ոգտագործության տակ գտնվող հողալին (նաև անտառալին ու ջրալին) տեսքերի նկատմամբ, ինչպես նաև գյուղխորհրդի անմիջական ոգտագործությանը հանձնվելիք հողատեսքերի վորոշումը սահմանվում են դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ:

53. Գյուղատնտեսական կոլեկտիվների փոխհարաբերությունները գյուղական խորհուրդների (կամ նրանց համապատասխանող մարմինների հետ) վորոշվում են դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ նախատեսվելիք հատուկ կանոններով:

ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՆ ՀՈՂԵՐ

54. Հատուկ նշանակության հողեր համարվում են այն հողերը, վորոնք հանձնված են պետական հիմնարկներին ու ձեռնարկություններին և հասարակական կազմակերպություններին, վոչ գյուղատնտեսական բնույթի հատուկ նպատակներով անմիջականորեն ոգտագործելու համար (տրանսպորտի կարիքների, ռազմական կարիքների, հանքերի մշակության, գործարանների, դպրոցների, բուժավայրերի համար և այլն):

55. Հատուկ նշանակության հողերը տրամադրվում են ԽՍՀ Միության (հոդ. 2, Բք) կետ) և դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանված կարգով, գտնվում են համապատասխան հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների մերձավոր կառավարչության տակ և ոգտագործվում են այդ հողերի վերաբերյալ յեղած առանձին կանոնադրությունների համաձայն:

56. Հատուկ նշանակության հողերի կարիքը տվյալ

նպատակի համար վերանալուց հետո, նրանք անցնում են համապատասխան հողային կամ քաղաքային մարմինների տրամադրությանը ըստ պատկանելւոյն:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀՈՂԵՐ

57. Քաղաքային հողեր համարվում են այն հողերը, վորոնք գտնվում են քաղաքային սահմանագծի ներսում, բացի հատուկ նշանակութւան հողերից:

58. Քաղաքային սահմանագիծը վորոշելու և փոփոխելու կարգը, ինչպես նաև հողային կարգ ու կանոնը քաղաքային սահմանագծի մեջ, վորոշվում է դաշնակից հանրապետութւոյնների որենսդրութւամբ:

59. Քաղաքային հողերը գտնվում են քաղաքային խորհուրդների տեսչութւան տակ:

ՊԵՏԵԿԱՆ ՊԸՀԵՍՏԻ ՀՈՂԵՐ

60. Պետական պահեստի բոլոր հողերը գտնվում են հողային մարմինների տեսչութւան տակ և նրանց կողմից ոգտագործվում են՝ կամ անմիջականորեն տնտեսութւոյն վարելու կարգով, կամ պահեստի հողերը զանազան կատեգորիաների ոգտագործողներին պայմանագրային կամ աշխատավորական ոգտագործութւան համար տրամադրելու միջոցով:

61. Պետական պահեստի հողերն առաջին հերթին տրամադրվում են պետական գյուղատնտեսական խոշոր ձեռնարկութւոյններ (խորհրդային տնտեսութւոյններ), ինչպես նաև կոլեկտիվ տնտեսութւոյններ (գյուղատնտեսական կոմունաներ, արտեխներ, ընկերութւոյններ) կազմակերպելու համար և միայն դրանից հետո կարող են հատկացվել աշխատավորական տիպի անհատական տնտեսութւոյններին:

62. Պետական պահեստի հողերի վարձակալների կողմից այդ հողերն ուրիշ անձանց հանձնելը (յենթավարձակալութիւն) անպայման արգելվում է, այդպիսի դործարջներին մասնակցողները զրկվում են հողից ոգտվելու իրավունքից, լենթարկվելով քրեյական պատասխանատվութիւն:

ՀՈԳԱՅԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳՈԳՏԵԳՈՐԺՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԼՈՒՋԸՑՈՂ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԹՈՒՄԸ

63. Հողաշինարարութիւն ժամանակ առաջացող, ինչպես նաև հողոգտագործութիւն իրավունքի մասին լեղած վեճերը և խախտված տիրապետութիւն վերականգնմանը վերաբերող խնդիրները քննվում և լուծվում են վիճելի հողը գտնված շրջավայրում, դաշնակից հանրապետութիւնների կողմից սահմանվելիք կարգով:

Խ. Ս. Հ. Միութիւն ԿԳԿ նախագահ՝ Ս. Ջերվյակով
Խ.Ս.Հ. Միութիւն ԿԳԿ քարտուղար՝ Ս. Յեցուկիձե

Մոսկվա—Կրեմլ

15 դեկտեմբերի, 1928 թ.

Հրապարակված է՝ Խ. Ս. Հ. Միութիւն Կ.Գ.Կ յել Հ.Կ.Գ.Կ.
«Տեղեկատուլի» 1928 թ. դեկտ. 16-ի № 292:

Ց Ա Ն Կ

	ԾԶ
1. Ընդհանուր հիմունքները հաստատելու մասին	3
2. Հիմնական սկզբունքները	5
3. Աշխատավորների հողոգտագործության իրավունքը	7
4. Հողաշինարարություն	12
5. Գաղթ	14
6. Հողոգտագործության կոլլեկտիվ յեվ ընկերական այլ ծեվերը խրախուսելու միջոցներ	16
7. Խորհրդային տնտեսություններ	19
8. Աշխատավորական ոգտագործության հողի վարձակա- լություն	21
9. Գյուղատնտեսության մեջ կիրառվող վարձու աշխա- տանքի մասին	24
10 Հողային հասարակություն յեվ գյուղական խորհուրդ	25
11. Հատուկ նշանակություն հողեր	28
12. Քաղաքային հողեր	29
13. Պետական պահեստի հողեր	29
14. Հողային վեճերի լուծումը	30





16. Հայաստանի Կոմիտեի ստեղծման Կուսակցության
Կենտրոնական Կոմիտեի 2-րդ Գլխի Բա-
նաձեռնարկը (սպառված) 15 »
17. Ռ. Պրեմյան. — Սոցիալ-դեմոկրատիական անասուն-
ների ժամանակագրություն (սպառվ.) 15 »
18. Հ. Ազատյան. — Գյուղատնտեսական բանվորութ.
և միջազգ. կոմիտեի ստեղծման շարժումը (սպառ.) 40 »
19. Ն. Խան-Աղյան. — Ուղեցույց արդյունավետ խոզա-
բուծության համար 15 »
20. Ֆերդինանդով. Հավաքում. և նրա ոգևորում. (սպ.) 20 »
21. Ս. Դանիելյան. — Հավ. և ուշ, քան յերբեք (ազրո-
պիսիս) (սպառված) 20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Կտավատը և կա-
նիքը (սպառ.) 20 »
23. Ս. Լուկասով. — Անդրկովկասի տնտեսական դրու-
թյունը (սպառ.) 15 »
24. Համեսով Հայաստանի Խ. Ս. Համեսովի ստեղծման
անհատների փայտեղեն բաց քաղելու համար
(պաշտոնական) 30 »
25. Պրոֆ. Ս. Պ. Պրեմյան. — Կաթնատու կովի կերակր. 30 »
26. Ս. Ս. Ֆրեյդման. — Ինչու պետք է ցելը շուտ անել 15 »
27. Ս. Պրեմյան. — Գյուղատնտեսական (ազրո-պատմվածք) 15 »
28. Ս. Պրեմյան. — Կարտոֆիլի մշակութ. յունը 20 »
29. Լ. Սոլբերգ. — Կովի դատը (ազրո-պիսիս) 20 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Տիգրանի (սպառ.) 5 »
31. Խ. Ս. Ֆրեյդման. — Պտղատու ծառերի ֆունգու-
սիայի ու հիվանդությունների 25 »
32. Ս. Ս. Ֆրեյդման. — Գյուղի հողաշինարարութ. 20 »
33. Ս. Պրեմյան. — Տրակտորը (ազրո-պատմվածք) 15 »
34. Ֆրեյդման. — Սոցիալ-դեմոկրատիական անասունների ազրո-դրույց 15 »
35. Խան-Աղյան. — Գյուղատնտ-անասնաբույժը և իր
ազրո-դրույցը 20 »
36. Ս. Ֆրեյդման. — Տասը պատգամ անասնապահին
(բ. տպագր.) 20 »
37. Ս. խան-Աղյան. — Միջավայրի և գործնական
ձեռնարկ (սպառված) 60 »
38. Ս. խան-Աղյան. — Մեր գյուղատնտեսու-
թյան հերթական խնդիրներից (սպառված) 40 »

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳԻՏ. ԳՐԱԳ.



220025064

39. Ա. Արաճապետ.—Գուլթան, թե՞ արոր (սպառ.) 10 է.
 40. Վ. Բոյկով.—Այժն աղքատի կոմիսի (սպառված) 20 »
 41. Խ. Յեր-Ներսիսյան.—Գոմաղրը 20 »
 42. Խ. Կուզմեցով.—Լենինը և գյուղացիութունը 30 »
 43. Ա. Մուսեղյան.—Անտառը պետք է հաշվով կտրել 5 »
 44. Խ. Յեր-Ներսիսյան.—Ինչպես պատվաստել պրո-
 դատու ծառերը 10 »
 45. Ա. Բակունց.—Սոսորշուրի կոմունան 30 »
 46. Հ. Ազաթյան.—Յեռադաշտից դեպի սոցիալիզմ
 կոոպերացիայի վրայով 1 ա. 50 »
 47. Վ. Ս. Միխայլով.—Տավարի վարակիչ հիվանդու-
 թյունները 5 »
 48. Մ. Թումանյան.—Վիկ 25 »
 49. Պ. Քալանթարյան.—Գոմաղր 5 »
 50. Նոյեմբերի ճանապարհին (ժողով.) (սպառ.) 20 »
 51. Պրոֆ. Ա.Վ. Քալանթար.—Կաթնառատ կովի ընտ-
 րությունը և նախիրի ազնվացումը 20 »
 52. Հրահանգ գյուղատնտ. կոոպերատիվ ընկերու.թ.
 տոմարագրելու կարգի մասին (հավ. գյուղ. կյանքի)
 53. ԽՍՀՄ Հողոգտագործության յեվ հողաօգնարա-
 րության ընդհանուր հիմունքները 20 »
 54. Հ. Փիլոսոֆյան.—Հողժողովոմատի 1927/28 թ. գոր-
 ծունեությունը

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Ա. Վերմիսյան.—Պտղատու այգին ու նրա խնամքը
2. Վ. Պ. Դոբրինին.—Ձիերի արհեստական բեղմնավորումը
3. Պ. Քալանթարյան.—Բերքի բարձրացման խնդիրներ
4. Ա. Բ. Խաչակյան.—Հանրամատչիլի զրույցներ գինե-
 գործութ. մասին

ԳԻՄՇԼ՝ ՅԵՐԵՎԱՆ, Հողժողովոմատ՝ Հրատարակչության,
 Հայգրքի կենտրոնական յեվ գավառական գրա-
 խանութներին, Գավոռը ժիններին: